ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.01.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/02

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Վ. Հայրապետյանի (լիազորագիր, տրված՝ 16.01.2020թ.)

Տ. Վահրադյանի (լիազորագիր, տրված՝ 16.01.2020թ.)

ՀՀ Արարատի մարզպետարանի ներկայացուցիչներ՝

Լ. Խաչատրյանի (լիազորագիր, տրված՝ 15.01.2020թ.)

Լ. Գրիգորյանի (լիազորագիր, տրված՝ 15.01.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2019թ. թիվ 26/26-1/21642-2019 գրությամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզպետարանի 25.12.2019թ. թիվ 05 //12270-2019 գրության հիման վրա, 26.12.2019թ. թիվ 26/26-1/21642-2019 գրությամբ նախաձեռնել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/02 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ Ընկերության կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվել են պատշաճ, ավելին՝ իրականացվել են նաև պայմանագրում չներառված այլ աշխատանքներ, քանի որ առանց դրանք իրականացնելու հնարավոր չէր լինի կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքները: Ընկերությունը բազմիցս դիմել է պատվիրատուին՝ խնդրելով ձևավորել աշխատանքների ընդունման հանձնաժողով և ամրագրել փաստացի կատարված աշխատանքների հանձնման-ընդունման փաստը, ինչպես նաև վճարել կատարված աշխատանքների համար: Սակայն յուրաքանչյուր անգամ Ընկերությունը պատվիրատուից ստացել է մեկ պատասխան, որի համաձայն՝ աշխատանքները պետք է իրականացվեն 81 մլն ՀՀ դրամի շրջանակներում, մինչդեռ Ընկերությունն իրականացրել է մոտ 105 մլն ՀՀ դրամի աշխատանքներ: Ընկերությունը գրեթե ավարտին է հասցրել պայմանագրով նախատեսված աշխատանքները և պատրաստ է նաև իրականացնել պայմանագրի վերջին փուլ կազմող աշխատանքները, սակայն պատվիրատուն փաստացի չի ընդունել և չի վճարել կատարված աշխատանքների համար: Պատվիրատուն վճարել է ընդամենը 40 մլն ՀՀ դրամ, սակայն մնացած աշխատանքներն այդպես էլ չի ընդունել: Ընդ որում՝ փաստացի կատարված աշխատանքների ֆիքսման անհրաժեշտությունը

պայմանավորված էր նրանով, որ որոշ աշխատանքներ իրականացվել են պայմանագրով նախատեսվածից ավել, իսկ որոշ աշխատանքներ՝ նախատեսվածից պակաս:

3. <u>ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արարատի մարզպետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.12.2019թ. թիվ 05 //12270-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար 28.08.2017թ. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հետ կնքվել է թիվ «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր)՝ Արարատ քաղաքի ՈԿՖ Բանավանի դրենաժային համակարգի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար 81000.0 հազ. դրամ արժեքով:

Աշխատանքները նախատեսված էին ավարտելու 2017թ. նոյեմբերի 15-ին, սակայն կապալառու կազմակերպության կողմից սահմանված ժամկետում չի ավարտվել և ՀՀ կառավարության 27.06.2019թ. թիվ 822-Ն որոշման համաձայն մարզպետարանի և կատարողի միջև 31.10.2019թ. կնքված թիվ 3 համաձայնագրով պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգվել էր մինչև 2019թ. դեկտեմբերի 1-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանված ժամկետում աշխատանքները չեն ավարտվել և Պատվիրատուին աշխատանքների հանձնելը դարձել է ակնհայտ անհնար, ուստի հիմք ընդունելով Պպայմանագրի 3.1 կետի «բ» ենթակետը, միակողմանի լուծվել է 28.08.2017թ. թվականին «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հետ կնքված «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնման պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/02 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր առարկել են Ընկերության ներկայացուցիչների կողմից հայտնած դիրքորոշման դեմ, նշելով, որ Ընկերությունը պատվիրատուին դիմել է աշխատանքների հանձնման-ընդունման հանձնաժողով ստեղծելու մասին գրությամբ պայմանագրի ժամկետը լրանալուց հետո միայն: Միևնույն ժամանակ նշված հանձնաժողովը պետք է ստեղծվեր աշխատանքներն ամբողջությամբ

ավարտելուց հետո, մինչդեռ Ընկերությունը պայմանագրի ժամկետը լրանալու պահի դրությամբ դեռևս ավարտին չէր հասցրել պայմանագրով նախատեսված աշխատանքները: Ընդ որում՝ պայմանագրի ժամկետը երկարաձգվել էր և ընկերությանը տրամադրվել էր հավելյալ ժամկետ:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/02 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/02 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Արարատի մարզպետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 28.08.2017թ. կնքվել է «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Արարատ քաղաքի ՈԿՖ բանավանի դրենաժային համակարգի հիմնանորոգման աշխատանքները:

2. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին ուղղված 19.12.2019թ. թիվ 01/12074-2019 գրությամբ ՀՀ Արարատի մարզպետարանը հայտնել է, որ միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2019թ. թիվ 26/26-1/21642-2019 գրությունը, ՀՀ Արարատի մարզպետարանի 25.12.2019թ. թիվ 05 //12270-2019 գրությունը և կից փաստաթղթերը, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել

գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ Արարատի մարզպետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 28.08.2017թ. կնքվել է «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Արարատ քաղաքի ՈԿՖ բանավանի դրենաժային համակարգի հիմնանորոգման աշխատանքները:

Նույն պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետով սահմանվել է, որ աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 15.11.2017թ.:

Պայմանագրի գինը սահմանվել է 81 000 000 ՀՀ դրամ:

Կողմերի միջև 17.12.2018թ. կնքվել է համաձայնագիր N 1-ը, որի համաձայն աշխատանքների կատարման ժամկետն երկարաձգվել է մինչև 20.12.2019թ.:

Կողմերի միջև 23.07.2019թ. կնքվել է համաձայնագիր N 2-ը, որի համաձայն աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է 01.11.2019թ.:

Կողմերի միջև 31.10.2019թ. կնքվել է համաձայնագիր N 3-ը, որի համաձայն աշխատանքների կատարման ժամկետն երկարացվել է և սահմանվել 01.12.2019թ.:

Գործում առկա են 17.12.2018թ., 31.07.2019թ., 01.08.2019թ., 04.10.2019թ., 29.10.2019թ. կնքված N 1, N 2, N 3, N 4 հանձնման-ընդունման արձանագրությունները, որոնց համաձայն Ընկերության կողմից հանձնվել իսկ Պատվիրատուի կողմից ընդունվել է 43 550 136 ՀՀ դրամի աշխատանքներ:

Պատվիրատուին ուղղված 24.05.2019թ. գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում պարզվել է, որ հին դրենաժային խողովակաշարն անցնում է նոր կառուցվող խողովակաշարին զուգահեռ, որի պատճառով ԴՐ-1 և ԴՐ 1-1 գծերը կառուցելու ընթացքում տեղի են ունենում փլուզումներ, որի հետևանքով առաջանում են չնախատեսված մեծ ծավալներով հողային աշխատանքներ:

Նույն գրությամբ Ընկերությունը հայտնել է նաև, որ ի հայտ են եկել նաև նախկինում կառուցված ջերմատարի խողովակաշարերն իրենց բետոնե տակդիրներով և

կափարիչներով, որը զուգահեռ է նոր կառուցվելիք ԴՐ 1-1 գծին և ենթակա է ապամոնտաժման:

Վերը նշված հանգամանքներից ելնելով՝ Ընկերությունը խնդրել է ստեղծել հանձնաժողով Ընկերության մասնակցությամբ, չնախատեսված հողային աշխատանքների ծավալները ճշտելու համար:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ին ուղղված 19.12.2019թ. թիվ 01/12074-2019 գրությամբ ՀՀ Արարատի մարզպետարանը հայտնել է, որ հաշվի առնելով այն հագամանքը, որ սահմանված ժամկետում աշխատանքները չեն ավարտվել և Պատվիրատուին հանձնելը դարձել է ակնհայտ անհնար, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 3.1 կետի «բ» ենթակետը, Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 3.1. կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Այսպիսով՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն իր և ՀՀ Արարատի մարզպետարանի միջև 28.08.2017թ. կնքված «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/01» ծածկագրով պայմանագրով ստանձնել է հիմնանորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը: Կողմերի միջև

31.10.2019թ. կնքվել է համաձայնագիր N 3-ը, որի համաձայն աշխատանքների կատարման ժամկետն երկարացվել է և սահմանվել 01.12.2019թ.: Ուսումնասիրելով գործում առկա նյութերն արձանագրում եմ, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն թույլ է տվել Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պայմանագրի միակողմանի լուծման: Մասնավորապես՝ Պայմանագրի կատարման 01.12.2019թ. ժամկետի դրությամբ Ընկերության կողմից ամբողջությամբ չեն իրականացվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները: Գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի 3.1. կետի «բ» ենթակետի խախտում, որի հետևանքով Պայմանագիրը լուծվել է:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2019թ. թիվ 26/26-1/21642-2019 գրությամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**